# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ՀՀ ԱՆ ԱԱԻ-ԳՀԱՊՁԲ-19/11»

ք. Երևան «09» հուլիս 2019թ.

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն ի դեմս Տնօրեն Ա. Բազարչյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Բ.Թաղևոսյանի, որը գործում է -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար։

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 726500 /յոթ հարյուր քսանվեց հինգ հազար/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը

կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱՆ <<Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ>>ՓԲԸ
Հասցե՝ք. Երևան, Կոմիտաս 49/4
ՀՎՀՀ՝ 00011624
Բանկ՝<<Հայէկոնոմբանկ>>Արաբկիր մ/ճ
h/h՝ 163058101441
Տնօրեն Ա.Բազարչյան

---------------------------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

<<Կոնցեռն Էներգոմաշ>> ՓԲԸ
Հասցե Ք. Երևան, Արզումանյան 32-10
Բանկ՝«Էյչ Էս Բի Սի բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 002-182558-001
ՀՎՀՀ 01210095
Տնօրեն՝ Բաբկեն Թադևոսյան

---------------------------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1
« » 20 թ. կնքված
«ՀՀ ԱՆ ԱԱԻ-ԳՀԱՊՁԲ-19/11» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը** | արտադրողի անվանումը և ծագման երկիրը** | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գին/Հ դրամ | ընդհանուր գին/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը*** |
| 1 | 33691166/1 | BACILLUS CEREUS AGAR BASE (MOSSEL) | Liofilchem Իտալիա | Միջավայր նախատեսված Bacillus cereus-ի անջատման և որոշման համար համաձայն ISO 7932, ISO 21871 և FDA-BAM: Բաղադրությունը գ/լ. Կազեինի ֆերմենտատիվ ֆաջեսթ 10,0, մսային էքստրակտ 1,0, Դ-մանիտոլ 10,0, նատրիումի քլորիդ 10,0, ֆենոլ կարմիր 0,025, ագար 14,0, վերջնական pH 7.2 ± 0.2: Ֆորմատը՝ 100 գրամանոց պլաստիկ տարաներով: Արտադրանքը ունի ISO 9001, ISO 13485, որակի սերտիֆիկատ յուրաքանչյուր խմբաքանակի համար, CE, IVD: Եվրոպական արտադրության: | տուփ | 18000 | 18000 | 1 | Կոմիտաս 49/4 | 1 | Պայմանագիր կնքելուց հետո 30 աշխատանքային օրում |
| 2 | 33691166/2 | BAIRD PARKER AGAR BASE | Liofilchem Իտալիա | Սելեկտիվ միջավայր կոագուլազ դրական ստաֆիլակոկկերի անջատման և որոշման համար սննդամթերքում և ջրի մեջ: Բաղադրությունը գ/լ. Կազեինի պանկրեատիկ դաջեսթ 10,0, մսային էքստրակտ 5,0, խմորասնկային էքստրակտ 1,0, նատրիումի պիրուվատ 10,0, Լ-գլիցին 12,0, լիթիումի քլորիդ 5,0, ագար 17,0, վերջնական pH 7.2 ± 0.2 25°C-ում: Ֆորմատը՝ 100 գրամանոց պլաստիկ տարաներով: Արտադրանքը ունի ISO | տուփ | 13000 | 13000 | 1 | Կոմիտաս 49/4 | 1 | Պայմանագիր կնքելուց հետո 30 աշխատանքային օրում |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 9001, ISO 13485, որակի սերտիֆիկատ յուրաքանչյուր խմբաքանակի համար, CE, IVD: Եվրոպական արտադրության: | | | | | | | |
| 3 | 33691166/3 | CLOSTRIDIUM PERFRINGENS AGAR BASE | Liofilchem Իտալիա | Կլինիկական և այլ նմուշներում C. Perfringens հայտնաբերման համար նախատեսված միջավայր: Բաղադրությունը գ/լ. Կազեինի ֆերմենտատիվ դաշեսք 15,0, սոյայի ֆերմենտատից դաշեսք 5,0, խմորասնկային էքստրակտ5,0, նատրիումի անհիդրիդային դիսուլֆիտ 1,0, երկաթ (III) ամոնիումի ցիտրատ 1,0, ագար 15,0, վերջնական pH 7.6 ± 0.2 25°C-ում: Ֆորմատը՝ 100 գրամանոց պլաստիկ տարաներով: Արտադրանքը ունի ISO 9001, ISO 13485, որակի սերտիֆիկատ յուրաքանչյուր խմբաքանակի համար, CE, IVD: Եվրոպական արտադրության: | տուփ | 9500 | 9500 | 1 | Կոմիտաս 49/4 | 1 | Պայմանագիր կնքելուց հետո 30 աշխատանքային օրում |
| 4 | 33691166/4 | ENDO AGAR | Liofilchem Իտալիա | "Միջավայր կոլիֆորմների հաստատման թեստի համար: Բաղադրությունը գ/լ. Պեպտոն 10.0, լակտոզ 10.0, կալիումի հիդրոօրթոֆոսֆատ 3.5, ագար 15.0, նատրիումի սուլֆիտ 2.5, հիմնային ֆուցին 0.5, վերջնական pH = 7.5 ± 0.2 25 °C-ում:<br>Ֆորմատը՝ 500 գրամանոց պլաստիկ տարաներով: Արտադրանքը ունի ISO 9001, ISO 13485, որակի սերտիֆիկատ յուրաքանչյուր խմբաքանակի համար, CE, IVD Եվրոպական արտադրության: | տուփ | 34000 | 34000 | 1 | Կոմիտաս 49/4 | 1 | Պայմանագիր կնքելուց հետո 30 աշխատանքային օրում |
| 5 | 33691166/5 | IRON SULPHITE AGAR | Liofilchem Իտալիա | Միջավայր նախատեսված սննդի և այլ նմուշներում սուլֆիտ քայքայող բակտերիաների որոշման համար: Բաղադրությունը գ/լ. Կազեինի ֆերմենտատիվ դաշեսք 10,0, նատրիումի սուլֆիտ 0,5, երկաթի ցիտրատ 0,5, ագար 15,0, վերջնական pH 7.1 ± 0.2: Ֆորմատը՝ 100 գրամանոց պլաստիկ տարաներով: Արտադրանքը ունի ISO 9001, ISO 13485, որակի սերտիֆիկատ յուրաքանչյուր խմբաքանակի համար, CE, IVD: Եվրոպական արտադրության: | տուփ | 9500 | 9500 | 1 | Կոմիտաս 49/4 | 1 | Պայմանագիր կնքելուց հետո 30 աշխատանքային օրում |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 6 | 33691166/6 | LEGIONELLA CYE AGAR BASE | Liofilchem Իտալիա | Սննդամիջավայր Legionella spp հայտնաբերման և քանակական որոշման համար: Բաղադրությունը գ/լ. Խմորասնկային էքստրակտ 10,0, ակտիվացված ածուխ 2,0, ագար 12,0, վերջնական pH 6.9 ± 0.4 25°C-ում: Ֆորմատը՝ 100 գրամանոց պլաստիկ տարաներով: Արտադրանքը ունի ISO 9001, ISO 13485, որակի սերտիֆիկատ յուրաքանչյուր խմբաքանակի համար, CE, IVD: Եվրոպական արտադրության: | տուփ | 13500 | 13500 | 1 | Կոմիտաս 49/4 | 1 | Պայմանագիր կնքելուց հետո 30 աշխատանքային օրում |
| 7 | 33691166/7 | M.R.S. AGAR | Liofilchem Իտալիա | Միջավայր նախատեսված մեզոֆիլ կաթնաթթվային բակտերիաների անջատման և որոշման համար, համաձայն ISO 15214: Բաղադրությունը գ/լ. Կազեինի ֆերմենտատիվ դաջեսթ 10,0, մսային էքստրակտ 10,0, խմորասնկային էքստրակտ 4,0, տրիամոնիում ցիտրատ 2,0, նատրիումի ացետատ 5,0, մագնեզիումի սուլֆատի հեպտահիդրատ 0,2, մագնեզիումի սուլֆատի տետրահիդրատ 0,05, կալիումի հիդրոգեն ֆոսֆատ 2,0, գլյուկոզ 20,0, ագար 15,0, վերջնական pH 5.7 ± 0.1 25°C-ում: Ֆորմատը՝ 500 գրամանոց պլաստիկ տարաներով: Արտադրանքը ունի ISO 9001, ISO 13485, որակի սերտիֆիկատ յուրաքանչյուր խմբաքանակի համար, CE, IVD: Եվրոպական արտադրության: | տուփ | 37000 | 37000 | 1 | Կոմիտաս 49/4 | 1 | Պայմանագիր կնքելուց հետո 30 աշխատանքային օրում |
| 8 | 33691166/8 | MAC CONKEY BROTH (purple) | Liofilchem Իտալիա | Սելեկտիվ միջավայր ջրի և կաթի մեջ կոլիֆորմների որոշման համար: Բաղադրությունը գ/լ. Պեպտոն 20,0, լակտոզ 10,0, լեղու աղեր n°3 5,0, նատրիումի քլորիդ 5,0, բրոմկրեզոլ մանուշակագույն 0,01, վերջնական pH = 7.4 ± 0.2 25 °C-ում: Ֆորմատը՝ 100 գրամանոց պլաստիկ տարաներով: Արտադրանքը ունի ISO 9001, ISO 13485, որակի սերտիֆիկատ յուրաքանչյուր խմբաքանակի համար, CE, IVD: Եվրոպական արտադրության: | տուփ | 9500 | 9500 | 1 | Կոմիտաս 49/4 | 1 | Պայմանագիր կնքելուց հետո 30 աշխատանքային օրում |
| 9 | 33691166/9 | MUELLER | Liofilchem | Միջավայր Կիրբի-Բաուերի մեթոդով | տուփ | 19000 | 19000 | 1 | Կոմիտաս | 1 | Պայմանագիր |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | HINTON AGAR | Իտալիա | զգայունության թեստի իրականացման համար: Բաղադրությունը. Մսային էքստրակտ 2.0 գ/լ, կազամինային թթուներ տեխնիկական 17.5 գ/լ, օսլա 1.5 գ/լ, ագար 15.0 գ/լ, վերջնականpH7.3 ± 0.1: Ֆորմատը ՝ 100 գրամանոց պլաստիկ տարաներով: Արտադրանքը ունի ISO 9001, ISO 13485, որակի սերտիֆիկատ յուրաքանչյուր խմբաքանակի համար, CE, IVD: Եվրոպական արտադրության: | | | | | 49/4 | | կնքելուց հետո 30 աշխատանքային օրում |
| 10 | 33691166/10 | O.A. LISTERIA AGAR | Liofilchem Իտալիա | Քրոմոգեն սելեկտիվ միջավայր Listeria monocytogenes անջատման և տարբերակման համար: Բաղադրությունը գ/լ. Մսային պեպտոն 18,0, տրիպտոն 6,0, խմորասնկային էքստրակտ 10,0, նատրիումի պիրուվատ 2,0, գլյուկոզ 2,0, մագնեզիումի գլիցերոֆոսֆատ 1,0, մագնեզիում սուլֆատ 0,5, նատրիումի քլորիդ 5,0, լիթիումի քլորիդ 10,0, դինատրիում հիդրոգեն ֆոսֆատ 2,5, 5-բրոմո-4-քլորո-3-ինդոլիլ- β-Դ-գլուպիրանոզիդ 0,05, ագար 15,0, վերջնական pH 7.2 ± 0.2: Ֆորմատը ՝ 100 գրամանոց պլաստիկ տարաներով: Արտադրանքը ունի ISO 9001, ISO 13485, որակի սերտիֆիկատ յուրաքանչյուր խմբաքանակի համար, CE, IVD: Եվրոպական արտադրության: | տուփ | 42000 | 42000 | | Կոմիտաս 49/4 | | Պայմանագիր կնքելուց հետո 30 աշխատանքային օրում |
| 11 | 33691166/11 | RAPPAPORT VASSILIADIS SOY (RSV) BROTH | Liofilchem Իտալիա | Հարստացնող միջավայր մսից և կաթնամթերքից, կղանքից և աղտոտված ջրերից Salmonella spp անջատման համար, համաձայն ISO 6579 և ISO 6785: Բաղադրությունը գ/լ. Սոյտոն 4,5, նատրիումի քլորիդ 7,2, կալիումի դիհիդրոգեն ֆոսֆատ 1,26, դիկալիում հիդրոգեն ֆոսֆատ 0,18, մագնեզիումի անհիդրիդային քլորիդ 13,58, մալախիտ կանաչ 0,036, վերջնական pH = 5.2 ± 0.2 25 °C-ում: Ֆորմատը ՝ 100 գրամանոց պլաստիկ տարաներով: Արտադրանքը ունի ISO 9001, ISO 13485, որակի սերտիֆիկատ յուրաքանչյուր | տուփ | 8000 | 8000 | 1 | Կոմիտաս 49/4 | 1 | Պայմանագիր կնքելուց հետո 30 աշխատանքային օրում |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | խմբաքանակի համար, CE, IVD: Եվրոպական արտադրության: | | | | | | | |
| 12 | 33691166/12 | SLANETZ BARTLEY AGAR +TTC | Liofilchem Իտալիա | Սելեկտիվ միջավայր ֆեկալ էնտերոկոկկերի անջատման և քանակական որոշման համար ըստ ISO 7899-2:2000: Բաղադրությունը գ/լ. Տրիպտոզ 20,0, խմորասնկային էքստրակտ 5,0, գլյուկոզ 2,0, դիկալիում հիդրոգեն ֆոսֆատ 4,0, նատրիումի ազիդ 0,4, տրիֆենիլ տետրազոլիում քլորիդ 0,1, ագար 13,0, վերջնական pH 7.2 ± 0.2 25°C-ում: Ֆորմատը՝ 100 գրամանոց պլաստիկ տարաներով: Արտադրանքը ունի ISO 9001, ISO 13485, որակի սերտիֆիկատ յուրաքանչյուր խմբաքանակի համար, CE, IVD: Եվրոպական արտադրության: | տուփ | 10500 | 10500 | | Կոմիտաս 49/4 | | Պայմանագիր կնքելուց հետո 30 աշխատանքային օրում |
| 13 | 33691166/13 | X.L.D. AGAR | Liofilchem Իտալիա | Սելեկտիվ միջավայր սննդի, շրջակա միջավայրի նմուշների մեջ Salmonella և Shigella spp հայտնաբերման համար, համաձայն ISO 6579 և ISO 21567: Բաղադրությունը գ/լ. Խմորասնկային էքստրակտ 3,0, նատրիումի քլորիդ 5,0, քսիլոզ 3,75, լակտոզ 7,5, սախարոզ 7,5, L-լիզին 5,0, նատրիումի թիոսուլֆատ 6,8. երկաթ (III) ամոնիում ցիտրատ 0,8, ֆենոլ կարմիր 0,08, նատրիումի դեօքսիկոլատ 1,0, ագար 15,0, վերջնական pH 7.4 ± 0.2 25°C-ում: Ֆորմատը՝ 100 գրամանոց պլաստիկ տարաներով: Արտադրանքը ունի ISO 9001, ISO 13485, որակի սերտիֆիկատ յուրաքանչյուր խմբաքանակի համար, CE, IVD: Եվրոպական արտադրության: | տուփ | 14000 | 14000 | 1 | Կ4ոմիտաս 49/4 | 1 | Պայմանագիր կնքելուց հետո 30 աշխատանքային օրում |
| 14 | 33691166/14 | V+X Factor | Liofilchem Իտալիա | CE, IVD: Եվրոպական արտադրության: | տուփ | 14000 | 14000 | 1 | Կոմիտաս 49/4 | 1 | Պայմանագիր կնքելուց հետո 30 աշխատանքային օրում |
| 15 | 33691166/15 | Buciliius subtilis | Liofilchem | Buciliius subtilis ATCC ® 11778-ի խորըսառեցված ռեֆերենս | Հատ | 95000 | 95000 | 1 | Կոմիտաս | 1 | Պայմանագիր |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ATCC ® 11778) | Իտալիա | կուլտուրաարտադրական լաբորատորիայիում որակիվերահսկման նպատակով օգտագործելուհամար: Ստացված է ATCC ռեֆերենսկուլտուրաների հավաքածուից:Հավաքը ներառում է Buciliius subtilis ATCC ® 11778 ռեֆերենս կուլտուրայի 5 գնդիկպարունակող սրվակ: Յուրաքանչյուրլիոֆիլիզացված գնդիկ իրենից ներկայացնում է՝ միկրոօրգանիզմների քանակական պոպուլյացիա, ժելատին,յուղազրկված կաթ,ասկորբինաթթու, դեքստրոզ,ածուխ (այն չեզոքացնում է տոքսինները, որոնք առաջանում են լիոֆիլիզացմանգործընթացում, օգտագործման ուղեցույց,:Քանակական բնորոշում՝ ինոկուլումիյուրաքանչյուր 0.1 մլ-ը ապահովում է <100 ԳԱՄ աձ;Արտադրանքը ունի ISO 13485:2012, UNI EN ISO 9001:2008, ISO 13485:2003 CMDCAS, CE հավաստագրեր նորակի սերտիֆիկատ արտադրանքիյուրաքանչյուր խմբաքանակի (LOT-ի) համար: | | | | | 49/4 | | կնքելուց հետո 90 աշխատանքային օրում |
| 16 | 33691166/16 | Staphylococcus aureus ATCC ® 25923 | Liofilchem Իտալիա | Staphylococcus aureus ATCC ® 25923ի խորքսառեցված ռեֆերենս կուլտուրաարտադրական լաբորատորիայիում որակիվերահսկման նպատակով օգտագործելուհամար: Ստացված է ATCC ռեֆերենսկուլտուրաների հավաքածուից:Հավաքը ներառում է Staphylococcus aureus ATCC ® 25923 ռեֆերենս կուլտուրայի 5 գնդիկպարունակող սրվակ: Յուրաքանչյուրլիոֆիլիզացված գնդիկ իրենից ներկայացնում է՝միկրոօրգանիզմների քանակական պոպուլյացիա, ժելատին,յուղազրկված կաթ,ասկորբինաթթու, դեքստրոզ,ածուխ (այն չեզոքացնում է տոքսինները, որոնք | Հատ | 95000 | 95000 | 1 | Կոմիտաս 49/4 | 1 | Պայմանագիր կնքելուց հետո 90 աշխատանքային օրում |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | առաջանում են լիոֆիլիզացմանգործընթացում, օգտագործման ուղեցույց,:Քանակական բնորոշում՝ ինոկուլումիյուրաքանչյուր 0.1 մլ-ը ապահովում է <100 ԳԱՄ աճ;Արտադրանքը ունի ISO 13485:2012, UNI EN ISO 9001:2008, ISO 13485:2003 CMDCAS,<br>CE հավաստագրեր նորակի սերտիֆիկատ արտադրանքի յուրաքանչյուր խմբաքանակի (LOT-ի) համար: | | | | | | | |
| 17 | 33691166/17 | Escherichia coli ATCC® 25922 | Liofilchem Իտալիա | Escherichia coli ATCC® 25922-ի խորըսառեցված ռեֆերենս կուլտուրաարտադրական լաբորատորիայիում որակիվերահսկման նպատակով օգտագործելուհամար: Ստացված է ATCC ռեֆերենսկուլտուրաների հավաքածուից:Հավաքը ներառում Escherichia coli ATCC® 25922 ռեֆերենս կուլտուրայի 5 զնդիկպարունակող սրվակ: Յուրաքանչյուրլիոֆիլիզացված զնդիկ իրենից ներկայացնում է՝ միկրոօրգանիզմների քանակական պոպուլյացիա, ժելատին,յուղազրկված կաթ,ասկորբինաթթու, դեքստրոզ,ածուխ (այն չեզոքացնում է տոքսինները, որոնք առաջանում են լիոֆիլիզացմանգործընթացում, օգտագործման ուղեցույց,:Քանակական բնորոշում՝ ինոկուլումիյուրաքանչյուր 0.1 մլ-ը ապահովում է <100 ԳԱՄ աճ; Արտադրանքը ունի ISO 13485:2012, UNI EN ISO 9001:2008, ISO 13485:2003 CMDCAS,<br>CE հավաստագրեր նորակի սերտիֆիկատ արտադրանքիյուրաքանչյուր խմբաքանակի (LOT-ի) համար: | Հատ | 95000 | 95000 | 1 | Կոմիտաս 49/4 | 1 | Պայմանագիր կնքելուց հետո 90 աշխատանքային օրում |
| 18 | 33691166/18 | Salmonella typhimurium | Liofilchem Իտալիա | Salmonella typhimurium ATCC 14028-ի խորըսառեցված ռեֆերենս | Հատ | 95000 | 95000 | 1 | Կոմիտաս | 1 | Պայմանագիր |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ATCC 14028 | | կուլտուրաարտադրական լաբորատորիայիում որակիվերահսկման նպատակով օգտագործելուհամար: Ստացված է ATCC ռեֆերենսկուլտուրաների հավաքածուից:Հավաքը ներառում Salmonella typhimurium ATCC 14028 ռեֆերենս կուլտուրայի 5 գնդիկպարունակող սրվակ: Յուրաքանչյուրլիոֆիլիզացված գնդիկ իրենից ներկայացնում է՝ միկրոօրգանիզմների քանակական պոպուլյացիա, ժելատին,յուղազրկված կաթ,ասկորբինաթթու, դեքստրոզ,ածուխ (այն չեզոքացնում է տոքսինները, որոնք առաջանում են լիոֆիլիզացմանգործընթացում, օգտագործման ուղեցույց,:Քանակական բնորոշում՝ ինոկուլումիյուրաքանչյուր 0.1 մլ-ը ապահովում է <100 ԳԱՄ աճ; Արտադրանքը ունի ISO 13485:2012, UNI EN ISO 9001:2008, ISO 13485:2003 CMDCAS, CE հավաստագրեր նորակի սերտիֆիկատ արտադրանքիյուրաքանչյուր խմբաքանակի (LOT-ի) համար: | | | | | 49/4 | | կնքելուց հետո 90 աշխատանքային օրում |
| 19 | 33691166/19 | Listeria monocytogenes ATCC 19111 | Liofilchem Իտալիա | Listeria monocytogenes ATCC 19111 ի խորըսառեցված ռեֆերենս կուլտուրաարտադրական լաբորատորիայիում որակիվերահսկման նպատակով օգտագործելուհամար: Ստացված է ATCC ռեֆերենսկուլտուրաների հավաքածուից:Հավաքը ներառում Listeria monocytogenes ATCC 19111 ռեֆերենս կուլտուրայի 5 գնդիկպարունակող սրվակ: Յուրաքանչյուրլիոֆիլիզացված գնդիկ իրենից ներկայացնում է՝ միկրոօրգանիզմների քանակական պոպուլյացիա, ժելատին,յուղազրկված կաթ,ասկորբինաթթու, դեքստրոզ,ածուխ | Հատ | 95000 | 95000 | 1 | Կոմիտաս 49/4 | 1 | Պայմանագիր կնքելուց հետո 90 աշխատանքային օրում |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | (այն չեզոքացնում է տոքսինները, որոնք առաջանում են լիոֆիլիզացմանգործընթացում, օգտագործման ուղեցույց,:Քանակական բնորոշում՝ ինոկուլումիյուրաքանչյուր 0.1 մլ-ը ապահովում է <100 ԳԱՄ ած; Արտադրանքը ունի ISO 13485:2012, UNI EN ISO 9001:2008, ISO 13485:2003 CMDCAS, CE հավաստագրեր նորակի սերտիֆիկատ արտադրանքիյուրաքանչյուր խմբաքանակի (LOT-ի) համար: | | | | | | | |

*Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱՆ <<Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ>>ՓԲԸ
Հասցե՝ք. Երևան, Կոմիտաս 49/4
ՀՎՀՀ՝ 00011624
Բանկ՝<<Հայէկոնոմբանկ>>Արաբկիր մ/ճ
հ/հ՝ 163058101441
Տնօրեն Ս.Բազարչյան

/ստորագրություն/

Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

<<Կոնցեռն Էներգոմաշ>> ՓԲԸ
Հասցե Ք. Երևան, Արզումանյան 32-10
Բանկ՝«Էյչ Էս Բի Սի բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 002-182558-001
ՀՎՀՀ 01210095
Տնօրեն՝ Բաբկեն Թադևոսյան

/ստորագրություն/

Կ.Տ

*Հավելված N 2*
*«     »          20  թ. կնքված*
*«ՀՀ ԱՆ ԱԱԻ-ԳՀԱՊՁԲ-19/11»   ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին` ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1-19 | 33691166/1-33691166/19 | Մանրէաբանական շտամներ և միջավայրեր | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 50% | 50% | 100 % | 100 % | 100 % | 100 % |

**ԳՆՈՂ**

ՀՀ ԱՆ <<Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ>>ՓԲԸ
Հասցե` ք. Երևան, Կոմիտաս 49/4
ՀՎՀՀ` 00011624
Բանկ` <<Հայէկոնոմբանկ>>Արաբկիր մ/ճ
h/h` 163058101441
Տնօրեն Ա.Բազարչյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

<<Կոնցեռն Էներգոմաշ>> ՓԲԸ
Հասցե Ք. Երևան, Արզումանյան 32-10
Բանկ`«Էյչ Էս Բի Սի բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 002-182558-001
ՀՎՀՀ 01210095
Տնօրեն` Բարկեն Թաղևոսյան

/ստորագրություն/
Կ.Տ